

ՉԵԿՈՒՅԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐՔԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի Գ.Հովհաննիսյան համազյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2013 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի, ավագանու, ինչպես նաև գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարված աշխատանքները :

Նախապես ցանկանում ենք ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1831, տնտեսությունների թիվը՝ 307:

Ջրարքի գյուղական համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու համատեղ գործունեության արդյունքում 2013 թվականին լուծվեցին բնակչության համար հիմնախնդիրներ հանդիսացող մի շարք հարցեր: Իրականացվեցին աշխատանքներ, որոնք ուղղված էին համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը:

Համայնքի բնակիչները իրազեկված են եղել համայնքում կատարված աշխատանքներին, և նրանց տրվել է ամբողջական ու հավաստի տեղեկատվություն:

Գյուղապետարանի աշխատանքները 2013 թվականին եղել են առավել բաց, թափանցիկ, բնակիչները հնարավորություն են ունեցել սպառիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

Ստորև ներկայացվում են 2013 թվականին կատարված աշխատանքները և դրանց ֆինանսավորման համար ծախսված միջոցները:

2005 թվականից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 45 երեխա: Տարեսկզբին հաստատված նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ սուբսիդիան, «Ջրարքի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 2013 թվականին հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է 7113300/ յոթ միլիոն հարյուր տասներեք հազար երեք հարյուր/ դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Գյուղապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները:

2013 թվականի ընթացքում համայնքի ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք սկսած 2005 թվականից վերածվել են գեղեցիկ ավանդույթների:

1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 470000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ին կապակցությամբ:

Միջոցառման ժամանակ համայնքի թվով 67 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր/ դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ, գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի անձնակազմի թվով 23 կին աշխատողներին և մանկապարտեզի թվով 11 կին աշխատակիցներին նույաես նվիրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ նվերներ տրամադրվեց նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին, բուժկետի 2 աշխատակիցներին և փոստային բաժանմունքի 1 կին աշխատակցին:

2-րդ միջոցառումը կազմակերպվեց Հաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար:

3-րդ միջոցառումը կազմակերպվեց Վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի թվով 7 շրջանավարտներից յուրաքանչյուրին գյուղապետարանը նվիրեց 14286 /տասնչորս հազար երկու հարյուր ութսունվեց/ դրամ արժողությամբ նվերներ՝ ընդամենը 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

4-րդ միջոցառումը նվիրված էր Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվան, որի ժամանակ կազմակերպվեց երկու ժամյա միջոցառում, հինգ հեքիաթի հերոսների մասնակցությամբ, որի համար փոխանցվել է 51000/ հիսունմեկ հազար/ դրամ գումար:

5-րդ միջոցառումը կազմակերպվեց Գիտելիքի օրվա՝ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ: Համայնքի ավագանու որոշմամբ 239400 (երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր) դրամը գումար հատկացվեց սեպտեմբերի 1-ի կապակցությամբ Ջրարբի համայնքի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի աշակերտների նվերների ձեռք բերման համար: Միջոցառման ժամանակ թվով 42 1-ին դասարանի աշակերտներից յուրաքանչյուրին նվիրվեց 5700 / հինգ հազար յոթ հարյուր / դրամ արժողությամբ նվերներ՝ աշակերտական պայուսակ՝ գրեմական պիտույքներով լի:

6-րդ միջոցառումը տեղի ունեցավ ՌԻսուցչի օրվա՝ հոկտեմբերի 5-ի կապակցությամբ: Միջոցառման ժամանակ համայնքի միջնակարգ դպրոցի թվով 25 ուսուցիչների նվիրվեցին 4000 / չորս հազար/ դրամ արժողությամբ նվերներ:

7-րդ միջոցառումը կազմակերպվեց դպրոցում և մանկապարտեզում: Ավագանու որոշմամբ 405850 /չորս հարյուր հինգ հազար ութ հարյուր հիսուն/ դրամ հատկացվեց Ջրաբքի համայնքի միջնակարգ դպրոցի I-IV դասարանի թվով 126 աշակերտներին, Ջրաբքի համայնքի մանկապարտեզի թվով 35 երեխաներին, համայնքի թվով 6 հաշմանդամ երեխաներին, ինչպես նաև գյուղապետարանի և մանկապարտեզի աշխատակիցների թվով 10 երեխաներին Ամանորի առթիվ նվերների ձեռքբերմամբ: Յուրաքանչյուր երեխայի նվիրվեց 2290 /երկու հազար երկու հարյուր իննսուն/ դրամ արժողությամբ նվերներ: Այդ օրը մանկապարտեզում` Ամանորյա հանդեսի ժամանակ, մեծ անակնկալ մատուցվեց երեխաներին: Այս տարի ևս մանկապարտեզ էին հրավիրվել երեխաների կողմից շատ սիրված հեքիաթի հերոսները, Չմեռ պապն ու Չյունանուշը:

Համայնքի միջնակարգ դպրոցը իր հիմնախնդիրներով մշտապես եղել և մնում է համայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում: Բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվում են դպրոցին աջակցելու հարցում:

2006 թվականից սկսած համայնքի գյուղապետարանը փոխանցում է աշակերտների դպրոցական դասագրքերի վարձավճարներն ամբողջությամբ: Ջրաբքի գյուղական համայնքի միջնակարգ դպրոցին ֆինանսական օգնություն ցույց տալու նպատակով, դպրոցի դասագրքերի վարձավճարի համար 2013 թվականին հատկացվել և փոխանցվել է 429276 (չորս հարյուր քսանինը հազար երկու հարյուր յոթանասունվեց) դրամ գումար:

Ջրաբքի համայնքի գյուղապետարանը հոգացել է նաև դպրոցի I-XII դասարաններին պատմամշակութային օջախներ տանելու և ամառային արձակուրդներին էքսկուրսիաներ կազմակերպելու, ինչպես նաև Երևանում Ամանորյա հանդեսին մասնակցելու համար նախատեսված ճանապարհաձախսերը, որոնց ընդհանուր գումարը կազմում է 313000 /երեք հարյուր տասներեք հազար/ դրամ:

2013 թվականի 2-րդ կիսամյակում համայնքի բյուջեով նախատեսված 4269 «Փողոցների լուսավորում» հոդվածից 103500 (մեկ հարյուր երեք հազար հինգ հարյուր) դրամը հատկացվեց փողոցային լուսերի վերանորոգման աշխատանքների և սարքավորումների համար: Ամբողջ տարվա համար օրական 4- 5 ժամ լուսավորություն է ապահովվում համայնքում:

Համայնքի ավագանու որոշմամբ ամսական 81800 /ութսունմեկ հազար ութ հարյուր/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրաբքի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ` շաբաթական երկու անգամ, իրականացվում են աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթեզերը: Աղբահանման աշխատանքների

դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2013 թվականի ընթացքում աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 896600 /ութ հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր/ դրամ գումար:

2013 թվականին 398200 / երեք հարյուր իննսունուր հազար երկու հարյուր/ դրամ հատկացվեց գյուղապետարանին պատկանող ՎԱԶ2106 մակնիշի ավտոմեքենան վերանորոգելու համար:

2013 թվականին տեղի է ունեցել 16 ավազանու նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների դիմումները:

2013թվականին համայնքի թվով 31 ընտանիքների, իրենց դիմումների համաձայն, տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 1112000 / մեկ միլիոն հարյուր տասներկու հազար / դրամ:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2013 թվականին հարազատին կորցրած 8 ընտանիքներից յուրաքանչյուրին տրամադրվել է 50000 /հիսուն հազար / դրամ օգնություն:

2013 թվականին բնակիչների պահանջով գրվել է 590 տեղեկանք:

2013 թվականին համայնքում կայացավ 0,36հա գյուղ. նշանակության հողի ուղղակի վաճառք, որի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 22200 /քսաներկու հազար երկու հարյուր / դրամ եկամուտ:

2013 թվականի Ջրարբի բյուջեով հաստատվել է 28179500 / քսանութ միլիոն հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 29396300 /քսանինը միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 104.3 %-ը:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային եկամուտների , վարձակալական հողի հարկի և տեղական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների համար հաստատվել է 3036.5 հազ. դրամ, հավաքագրվել է 4129.4 հազ. դրամ, որը կազմում է 136.0%

Գյուղ. նշ. հողերից հողի հարկ հաստատվել է 2325,0 հազ. դրամ, հավաքագրվել 2424.0 հազ. դրամ, որը կազմում է 104.2%.

Վարձակալական հողի հարկ՝ հաստատվել է 210.0 հազ. դրամ, հավաքագրվել է 356.5 հազ. դրամ, որը կազմում է 170.0%

Տեղական տուրք՝ հաստատվել է 250.0 հազ. դրամ, հավաքագրվել է 245.5 հազ. դրամ, որը կազմում է 98.2%.

2013 թվականին համայնքի տրամադրվել է դոտացիա 21716.8 հազր դրամ, որը կազմում է 100%:

2013թվականին կատարվել են հետևյալ ծախսերը՝

| | |
|---------------------------------|--------------------|
| Աշխատավարձ | - 9980.3 հազ. դրամ |
| Պարգևատրում | - 729.0 հազ. դրամ |
| Էներգետիկ ծառայություններ | - 611.2 հազ. դրամ |
| Կապի ծառայություններ | - 148.0 հազ. դրամ |
| Ապահովագրական ծախսեր | -29.0 հազ. դրամ |
| Ներքին գործուղում | - 80.0 հազ. դրամ |
| Համակարգչային ծառայություններ | -269.2 հազ. դրամ |
| Ներկայացուցչական ծախսեր | - 1391.1 հազ. դրամ |
| Ընդհանուր բնույթի այլ | - 889.2 հազ. դրամ |
| Մասնագիտական ծառայութ. | - 330.1 հազ. դրամ |
| Գրասեն. ապրանքներ՝ | - 225.4 հազ. դրամ |
| Տրանսպորտային նյութեր | - 511.5 հազ. դրամ |
| Կենցաղային և հանրային սննդի | - 200.0 հազ. դրամ |
| Պարտադիր վճարներ | - 2.0 հազ. դրամ |
| Շենքերի և կառույցների կառուցում | - 68.4 հազ. դրամ |

| | |
|---------------------------------------|--------------------|
| Շենքերի և կառույցների վերանորոգում | - 1064.9 հազ. դրամ |
| Վարչական սարքավորումներ | - 1334.7 հազ. դրամ |
| Կոմունալ ծառայություններ | - 896.6 հազ. դրամ |
| Հատուկ նպատակային այլ | - 103.5 հազ. դրամ |
| Այլ մշակութային կազմակերպություն | - 514.0 հազ. դրամ |
| Հրատարակչություններ, խմբագրություններ | -74.2 հազ. դրամ |
| Սուբսիդիա | -7113.3 հազ. դրամ |
| Այլ նպաստներ բյուջեից | -2019.3 հազ. դրամ |

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ջրարբի համայնքի վարչական բյուջեի մնացորդը կազմում է 2375976 / երկու միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր յոթանասունվեց / դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը կազմում է 5068365 / հինգ միլիոն վաթսուներեք հազար երեք հարյուր վաթսուհինգ / դրամ:

Ջրարբի համայնքում առկա և լուծման խնդիր ունցնող ծախսատար խնդիրները հետևյալն են՝

- 1 Դպրոցի շենքի վերանորոգում
- 2 Մշակույթի տան վերանորոգում.
- 3 համայնքի փողոցների ասֆալտապատում

Ջրարբի համայնքի



Գ. Նազարյան